

Հաստատված է  
«ԷՓՐԻՔՈՑ ԿԱՊԻՏԱԼ»  
փակ բաժնետիրական ընկերության  
Գործադիր տնօրենի կողմից  
Վաչիկ Գևորգյան



10 հունվարի 2024թ.

«ԷՓՐԻՔՈՑ ԿԱՊԻՏԱԼ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿԶՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2024

## ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**1.1** «ԷՓՐԻԲՈԹ ԿԱՊԻՏԱԼ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կանոնակարգ»-ը (այսուհետ՝ «Կանոնակարգ») ներառում է փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարելու և կանխարգելման նպատակով Ընկերության կողմից իրականացվող միջոցառումներն ու ընթացակարգերը:

**1.2** Սույն Կանոնակարգը ներքին իրավական ակտ է և ընդունվում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ի թիվ ՀՕ-80-Ն օրենքի 23-րդ հոդվածի, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2014թ. հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգի համաձայն, հիմք ընդունելով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Կանոնակարգը մշակվել է ՀՀ օրենսդրության և ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

**1.3** Սույն Կանոնակարգի պահանջները տարածվում են Ընկերության բոլոր աշխատակիցների վրա:

**1.4** Կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

«**Ավագ Ղեկավարություն**»՝ Ընկերության աշխատակից կամ մարմին, որն իրավասու է հաշվետվություն տրամադրող անձի անունից փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման կանխարգելման հարցերով որոշումներ կայացնելու և գործողություններ կատարելու, այն է՝ Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցներ:

«**ՓԼ/ԱՖ**»՝ Փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորում:

«**ՉՈՉՏՖ**»՝ Չանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորում:

«**Լիազոր մարմին**»՝ ՀՀ կենտրոնական բանկ:

«**Օրենք**»՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ի թիվ ՀՕ-80-Ն օրենք:

«**Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակից/ՆԴՄ**»՝ Ընկերության փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման կանխարգելման գործառնություններ իրականացնող աշխատակից:

«**Ռիսկը**»՝ ՓԼ/ԱՖ վտանգավորության և դրա հավանականության մասին վկայող հանգամանք, որը կարող է բնութագրվել ըստ երկրների կամ աշխարհագրական տեղակայման, հաճախորդների տեսակի, Գործարքների կամ Գործարար հարաբերությունների տեսակի, ծառայությունների տեսակի կամ Լիազոր մարմնի կողմից սահմանված այլ չափանիշների:

«**Բարձր Ռիսկի չափանիշ**»՝ Օրենքով, Լիազոր մարմնի իրավական ակտերով և սույն Կանոնակարգով սահմանված չափանիշ, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման բարձր հավանականության մասին:

«**Գործարար հարաբերություն**»՝ Ընկերության կողմից Հանախորդին մատուցվող պարբերական ծառայություններ, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի Միանգամյա գործարքներով:

«**Գործարք**»՝ Ընկերության և Հանախորդի կամ Լիազորված անձի միջև, ինչպես նաև Հանախորդի կամ Լիազորված անձի և այլ անձի միջև Գործարք, որը կատարվում է Ընկերության միջոցով կամ հանդիսանում է Ընկերության ուսումնասիրության (դիտարկման) առարկա:

«Միանգամյա գործարք»՝ Գործարք, որի արդյունքում պարբերական ծառայությունների տրամադրման պարտավորություններ չեն առաջանում, և (կամ) որը գործարար հարաբերության հաստատում չի ենթադրում:

«Փոխկապակցված միանգամյա գործարքներ» միևնույն կողմի մասնակցությամբ միատեսակ բնույթի Միանգամյա գործարքներ, որոնք կատարվում են 24 ժամվա ընթացքում:

«Գործարքի մյուս կողմ»՝ Հանախորդի կողմից իրականացվող Գործարքի այլ մասնակից, որը տրամադրում (փոխանցում) կամ որին հասցեագրվում է Գործարքից բխող գույքը:

«Գործարքի կամ գործարար հարաբերության կասեցումը»՝ կասկածելի գործարքի և (կամ) գործարար հարաբերության առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքն է:

«Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժումը»՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողություններ չիրականացնելն է:

«Գործարքի կամ գործարար հարաբերության դադարեցումը»՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման ընդհատումն է:

«Գույքի Ստեղծում»՝ ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքի փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելք, այդ թվում՝ այդ գույքի ուղղակի կամ անուղղակի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման արգելք, ինչպես նաև որևէ Գործարար հարաբերության կամ Միանգամյա Գործարքների հաստատման կամ իրականացման արգելք:

«Հանախորդ»՝ Ընկերության հետ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձ, ինչպես նաև անձ, որն Ընկերությանն առաջարկում է կատարել կամ կատարում է Միանգամյա Գործարք:

«Իրական շահառու»՝ Ֆիզիկական անձ, որի անունից կամ օգտին հանախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հանախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է, կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի (բացառությամբ տրաստի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորման) իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝

ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ հասկացության «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

«Լիազորված անձ»՝ Հանախորդի հանձնարարությամբ և Հանախորդի անունից գործարքի կատարման կամ գործարար հարաբերությունում որոշակի իրավաբանական կամ փաստացի գործողությունների իրականացման լիազորություն ունեցող, այդ թվում՝ լիազորագրով կամ օրենքով սահմանված այլ հիմքով Հանախորդի կողմից տրված լիազորությունների հիման վրա ներկայացուցչություն իրականացնող անձ:

«Հանախորդի գործարար բնութագիր»՝ Հանախորդի գործունեության բնույթի, ազդեցության ու նշանակության, գործարքի կամ գործարար հարաբերությունների և Միանգամյա Գործարքների առկա ու ակնկալվող շարժի, ծավալների և ոլորտների, Լիազորված անձանց և Իրական շահառուների առկայության, ինքնության ու փոխկապակցվածության բնույթի, ինչպես նաև Հանախորդի գործունեությանը վերաբերող այլ փաստերի և հանգամանքների վերաբերյալ Ընկերության տեղեկությունների (պատկերացումների) ամբողջություն:

«**Հանախորդի պարզեցված ուսումնասիրություն**»՝ Ընկերության կողմից Հանախորդի պատշան ուսումնասիրության գործընթացի սահմանափակ կիրառում, որի դեպքում նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքվում են Օրենքով, Լիազոր մարմնի ընդունած նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոնակարգով նախատեսված տեղեկությունները:

«**Հանախորդի պատշան ուսումնասիրություն**»՝ Ընկերության կողմից Հանախորդի վերաբերյալ պատշան պատկերացում կազմելու նպատակով նրա ինքնության և գործարար բնութագրի վերաբերյալ Ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր) ձեռք բերելու ու վերլուծության գործընթաց, որը ներառում է Օրենքով, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոնակարգով նախատեսված գործողությունների իրականացումը:

«**Հանախորդի հավելյալ ուսումնասիրություն**»՝ Ընկերության կողմից Հանախորդի պատշան ուսումնասիրության գործընթացի ընդլայնված կիրառում:

«**Կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն**»՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, որի դեպքում կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից:

«**Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշ**»՝ սույն Կանոնակարգով և Լիազոր մարմնի իրավական ակտերով սահմանված փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հնարավորության մասին վկայող իրավիճակ կամ ազդակ:

«**Պատժամիջոցների ցանկեր**»՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, ԱՄՆ արտաքին ակտիվների վերահսկման գրասենյակի (OFAC), ԵՄ, Մեծ Բրիտանիայի Նորին Մեծության Գանձապետարանի (UK HMT) ցանկեր: Գործընկերների հետ գործարար պայմանավորվածությունների շրջանակում Ընկերության բաժնետերերի ժողովի որոշմամբ Պատժամիջոցների ցանկը կարող է ընդլայնվել՝ ներառելով համապատասխան երկրների և միջազգային մարմինների ցանկեր:

«**Չհամապատասխանող երկիր կամ տարածք**»՝ Լիազոր մարմնի հրապարակած ցանկերին համապատասխան՝ ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի միջազգային պահանջները չկիրառող կամ ոչ պատշան կիրառող արտասահմանյան երկիր կամ տարածք:

«**Կենսական շահերի կենտրոն**»՝ վայր, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահ է համարվում այն վայրը, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը/բնակարանը, որտեղ բնակվում է անձը և/կամ նրա ընտանիքը, և որտեղ գտնվում է նրա անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական/մասնագիտական գործունեության իրականացման վայրը:

«**Քաղաքական ազդեցություն ունեցող անձ/ՔԱԱ**»՝ պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում նշանակալից գործառույթներ իրականացրած կամ իրականացնող անձն է (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ սերտորեն փոխկապակցված անձը): Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝

ա. պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,

բ. խորհրդարանի անդամները,

գ. բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների դատավորները, անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի,

դ. կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և խորհրդի անդամները,  
ե. դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,

զ. քաղաքական կուսակցության պաշտոնատար անձինք,

է. պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները,

ը. տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները,

թ. միջազգային կազմակերպության ղեկավարները, ղեկավարի տեղակալները, խորհրդի անդամները կամ կառավարչական կամ վերահսկողական այլ համանման գործառույթներ իրականացնող մարմինների անդամները.

«ԴԲ»՝ Ընկերության կողմից գործարքների գրանցման և հաշվառման նպատակով կիրառվող «Դեպոզիտարիա և Բանկ» ծրագրային համակարգ:

«Միավոր ժամանակահատված» - մեկ ամիս ժամանակահատված:

1.5 Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոնակարգով, ապա դրանում օգտագործվող հասկացությունները ունեն Օրենքով նախատեսված նշանակությունը:

1.6 Սույն Կանոնակարգը սահմանում է Ընկերությունում ՓԼ/ԱՖ և ՉՈՉՏՖ կանխարգելման ոլորտում Ընկերության կառավարման մարմինների, այդ թվում՝ Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցների և ՓԼ/ԱՖ գործընթացում ընդգրկված այլ անձանց գործառույթներն ու պարտականությունները, ՓԼ/ԱՖ ռիսկի չափանիշներն ու դրանց որոշման կարգը, Հանախորդի նույնականացման, պատշաճ ուսումնասիրության, ռիսկերի բացահայտման և կառավարման կարգը, Գործարքը կամ Գործարար հարաբերությունը կասկածելի որակելու հետ կապված դիտարկման ընթացքը, Տեղեկությունների և փաստաթղթերի հավաքագրման, հաշվառման և պահպանման կարգը, ՓԼ/ԱՖ և ՉՈՉՏՖ կանխարգելման ոլորտում իրավասու անձանց և այլ աշխատակիցների ուսուցման կարգը, Կանոնակարգի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը և ներքին աուդիտի իրականացումը:

## **ԳԼՈՒԽ 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՓԼ/ԱՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

### **2.1 Ընկերության Բաժնետերերի Ժողովը՝**

1.1.1. հաստատում է Ներքին դիտարկումների մարմնի և ՓԼ/ԱՖ ոլորտում Ներքին աուդիտի հաշվետվությունները և ծրագրերը,

1.1.2. անհրաժեշտության դեպքում Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցներին հանձնարարում է իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ՝ կատարած գործարքների, հաստատած Գործարար հարաբերությունների, աշխատակիցների գործողությունների Օրենքին և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ,

1.1.3. հաստատում է ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները և վերահսկում դրանց իրականացումը,

1.1.4. իրականացնում է Օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:

### **2.2 Ընկերության Գործադիր տնօրենը՝**

2.2.1. հաստատում է ՓԼ/ԱՖ կանխարգելմանն ուղղված ներքին իրավական ակտերը,

2.2.2. ապահովում է Օրենքի, Կանոնակարգի և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի ամբողջական ու արդյունավետ կիրառումը և հսկողություն է իրականացնում դրա նկատմամբ,

2.2.3. նշանակում և ազատում է Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցներին, ապահովում է իր աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում պատշաճ ուսուցումը,

2.2.4. ապահովում է Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցների կողմից իրականացված ուսումնասիրությունների, ինչպես նաև

աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

**2.2.5.** իրականացնում է Օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառնություններ:

**2.3** ՓԼ/ԱՓ կանխարգելման ոլորտի պարտադիր միջոցառումներում ընդգրկված են նաև Ընկերության հաճախորդների հետ անմիջական կապ հաստատող պատասխանատու աշխատակիցները: Վերջիններս՝

**2.3.1.** ապահովում են Հաճախորդի, ինչպես նաև օտարերկրյա ֆինանսական հաստատությունների հետ թղթակցային կամ համանման այլ հարաբերություններ հաստատելիս վերջիններիս պատշաճ վերլուծությունն ու դրա համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկատվության հավաքագրումը, ամփոփումը և սույն Կանոնակարգի պահանջներին համապատասխան պահպանումը,

**2.3.2.** ապահովում են Բարձր ռիսկի Հաճախորդների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումն ու հավելյալ վերլուծության իրականացման նպատակով ՆԴՄ-ին տրամադրումը,

**2.3.3.** իրականացնում են Հաճախորդների և նրանց հաշիվներով գործառնությունների ընթացիկ հսկողություն և մոնիտորինգ,

**2.3.4.** միջոցներ են ձեռնարկում Հաճախորդների կամ երրորդ անձանց կողմից Կասկածելի գործարքների բացահայտման, ճանաչման ու կանխմանն ուղղությամբ, ինչպես նաև Կանոնակարգով սահմանված դեպքերում կամ ՆԴՄ-ի պահանջով, Հաճախորդների կամ երրորդ անձանց կողմից իրականացվող Կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունը անմիջապես հայտնում են ՆԴՄ-ին (Հավելված 1),

**2.3.5.** Գործարքի իրականացման ժամանակ Հաճախորդի կամ Գործարքի կողմերից որևիցե մեկի ստուգվող համապատասխան ցուցակների հետ համընկնման և/կամ Գործարքի մերժման պահանջի առկայության դեպքում դրա վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում են ՆԴՄ-ին համաձայն Հավելված 2-ի՝ Գործարքի մերժման վերաբերյալ համապատասխան թույլտվություն ստանալու նպատակով,

**2.3.6.** իրավունք չունեն այլ անձանց, ինչպես նաև այն անձին, որի վերաբերյալ ՆԴՄ-ին տեղեկություն է տրամադրվում, հայտնելու տեղեկության տրամադրման փաստի մասին:

### **ԳԼՈՒԽ 3. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՇԽԱՏԱԿԻԳՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

**3.1** Ընկերությունում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման գործառնությունները դրվում են Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցների վրա:

**3.2** ՆԴՄ-ն Կանոնակարգով, Օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված գործառնություններն իրականացնելիս անկախ է և ունի Ավագ ղեկավարության կարգավիճակ, ինչպես նաև՝ Ընկերությունում առկա տեղեկություններին և փաստաթղթերին ուղղակի և անմիջական հասանելիության իրավունք:

**3.3** ՆԴՄ-ն իրավասու է Գործարքը կամ Գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ կայացնել վերջնական որոշում, իսկ կայացրած որոշման մասին կարող է տեղեկացնել Գործադիր տնօրենին և Ժողովին միայն կասկածելի որակված գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը Լիազոր մարմնին տրամադրելուց, Գործարքը կամ Գործարար հարաբերությունը կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցները կամ այլ գույքը սառեցնելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո:

**3.4** Ընկերության աշխատակիցները պարտավոր են ՆԴՄ պահանջով նրանց ներկայացնել ցանկացած տեղեկատվություն, որը վերջիններիս կարծիքով անհրաժեշտ կլինի Կանոնակարգով

նախատեսված գործառույթներն իրականացնելու և փողերի լվացումն ու ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելելու համար:

**3.5** Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցը պարբերաբար, բայց ոչ պակաս, քան 6 ամիսը մեկ անգամ ուսումնասիրում է Ընկերության իրականացրած Գործարքների և հաստատած Գործարար հարաբերությունների, Ընկերության աշխատակիցների գործողությունների համապատասխանությունը Կանոնակարգին, Օրենքին և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված այլ իրավական ակտերի պահանջներին (Ներքին ուսումնասիրություն):

**3.6** Ներքին ուսումնասիրությունն իրականացվում է Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցի որոշման հիման վրա: Ներքին ուսումնասիրության վերաբերյալ գրավոր որոշումը (Ուսումնասիրության որոշում) հանձնվում է Ընկերության համապատասխան աշխատակիցներին և Ընկերության Գործադիր տնօրենին: Ուսումնասիրության որոշման մեջ նշվում են ուսումնասիրության նպատակները, ժամկետները և Ընկերության աշխատակիցների կողմից Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցներին տրամադրվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը և դրանց տրամադրման ժամկետները:

**3.7** Ուսումնասիրության արդյունքները, Կանոնակարգով նախատեսված պարտադիր այլ միջոցառումների և Լիազոր մարմնի կողմից առաջադրված այլ հարցերի վերաբերյալ տվյալները ամփոփվում են Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցի հաշվետվության մեջ, որը ներկայացվում է Ընկերության Գործադիր Տնօրենին՝ ուսումնասիրության որոշման մեջ նշված ուսումնասիրության ժամկետի ավարտից հետո՝ 10/տասը/ աշխատանքային օրվա ընթացքում (Հավելված 3):

**3.8** Կանոնակարգի 3.7 կետում նշված հաշվետվության մեջ ներառվում է.

**3.8.1.** Պարտադիր տեղեկացման ենթակա Գործարքների թիվը, Կասկածելի Գործարքների և Գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը,

**3.8.2.** այն Գործարքների և Գործարար հարաբերությունների թիվը և ամփոփ նկարագրությունը, որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն որակվել կասկածելի,

**3.8.3.** Ընկերության մերժած կամ դադարեցրած Գործարքների և Գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը,

**3.8.4.** սառեցված գույքի չափը,

**3.8.5.** կասեցրած Գործարքների և Գործարար հարաբերությունների թիվը և համառոտ նկարագրությունը, յուրաքանչյուր կասեցված Գործարքի կամ Գործարար հարաբերության արժեքի վերաբերյալ տեղեկությունները,

**3.8.6.** Ընկերության աշխատակիցների գործողությունների արդյունքում Օրենքի, սույն Կանոնակարգի և Լիազոր մարմնի ընդունած այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքերը:

**3.9** Գործող օրենսդրության ուսումնասիրության և կատարված վերլուծությունների արդյունքում Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցը, անհրաժեշտության դեպքում Կանոնակարգի 3.7 կետում նշված հաշվետվությանը կից ներկայացնում է նաև իր կողմից մշակված, Ընկերության Կանոնակարգի փոփոխությունների և լրացումների նախագիծը: Նշված նախագծի քննարկումից հետո այն ներկայացվում է Ընկերության համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

**3.10** ՆԴՄ -ն՝

**3.10.1.** ամփոփում և վերանայում է Լիազոր մարմնից ստացված «Ահաբեկչության մեջ կասկածվող» և նրանց հետ կապված անձանց, Լիազոր մարմնի, ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի, OFAC, EU, UK ցանկերում ընդգրկված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը՝ օգտագործելով նաև World Check տվյալների բազան և ապահովում է վերջինիս հասանելիությունը Ընկերության հաճախորդների հետ անմիջական կապ հաստատող պատասխանատու աշխատակիցներին: Ընդ որում Հաճախորդների՝ Պատժամիջոցների ցանկերի համապատասխանության ստուգման կարգը սահմանվում է Ընկերության՝ «Պատժամիջոցների համապատասխանության» քաղաքականությամբ:

- 3.10.2.** օրական կտրվածքով ԴԲ ծրագրով ստուգում է Ընկերության հաճախորդների հետ անմիջական կապ հաստատող պատասխանատու աշխատակիցների կողմից իրականացված լրացուցիչ վերլուծության ենթակա գործարքները,
- 3.10.3.** ստուգում է միջազգային բոլոր գործարքները, անկախ գումարի մեծությունից և հաճախորդի գործարար բնութագրից՝ իրականացնելով հավելյալ վերլուծություն,
- 3.10.4.** իրականացնում է Ընկերության հաճախորդների հետ անմիջական կապ հաստատող պատասխանատու աշխատակիցների կողմից ՆԴՄ-ին ներկայացված պարտադիր տեղեկացման և Կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, ամփոփումը, պահպանումը,
- 3.10.5.** ՓԼ/ԱՖ կանխարգելման հետ կապված գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով օժանդակում և խորհրդատվություն է տրամադրում ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցներին, ինչպես նաև Ընկերության աշխատակիցներին պարզաբանումներ է տալիս ՓԼ/ԱՖ դեմ պայքարին ուղղված աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ,
- 3.10.6.** ապահովում է Ընկերության անունից Լիազոր մարմնին պարտադիր տեղեկացման ենթակա Գործարքների վերաբերյալ հաշվետվությունների և այլ տեղեկությունների տրամադրումը, ինչպես նաև Ընկերության կապը Լիազոր մարմնի հետ,
- 3.10.7.** Կասկածելի Գործարար հարաբերությունների կամ Գործարքների բացահայտման նպատակով իրականացնում է վերլուծություններ և ուսումնասիրություններ, պահպանում է դրանց արդյունքները (Հավելված 4), այդ թվում Կասկածելի գործարքի կամ Գործարար հարաբերության մասին այն տվյալներն ու ենթադրությունները, որոնց հետ կապված Լիազոր մարմնին չի ներկայացվել Կասկածելի գործարքի կամ Գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն,
- 3.10.8.** ապահովում է Ընկերության Հաճախորդների և Գործարքների (Գործարար հարաբերությունների) ռիսկի գնահատումը, դասակարգումը ըստ Ռիսկի աստիճանի, իրականացնում է տվյալ ռիսկի խմբին համապատասխանության պարբերաբար վերանայում և ընթացիկ դիտանցում, հետևում է Գործարքի/Գործարար հարաբերությունների ընթացիկ դիտանցմանը և պարբերաբար վերանայում է տեղեկությունների ճշգրտման և թարմացման ընթացքը,
- 3.10.9.** որոշում է կայացնում Գործարար հարաբերությունը կամ Գործարքը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու վերաբերյալ, ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման գեների տարածման հետ կապված ֆինանսական միջոցները սառեցնելու վերաբերյալ, այդ հարցն ըստ անհրաժեշտության քննարկում է ներքին ազդակ տրամադրած և Հաճախորդներին սպասարկող այլ աշխատակիցների հետ, իսկ տարածայնությունների դեպքում կայացնում է վերջնական որոշում,
- 3.10.10.** իրականացնում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում Ընկերությունում գործող տեղեկատվական համակարգերի հսկման, տեղեկատվության մուտքագրման, հաշվառման, պահպանման և պարբերաբար թարմացման, դիտանցման գործառույթները,
- 3.10.11.** կազմակերպում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտում ներքին ուսուցումը և վերապատրաստումը, իրականացնում է ուսուցման ծրագրերի ընթացքի և արդյունքների դիտանցումը,
- 3.10.12.** մշակում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներքին իրավական ակտեր, դրանք ներկայացնում է համապատասխան մարմնի հաստատմանը, իրականացնում է դրանց արդյունավետության դիտանցումը, առաջարկներ է ներկայացնում արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ,
- 3.10.13.** իրականացնում է Օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ,
- 3.10.14.** իրականացնում է Ընկերության ղեկավար մարմինների հանձնարարած այլ գործառույթներ այնքանով, որքանով դա չի սահմանափակում ՆԴՄ-ի անկախությանը:

#### **ԳԼՈՒԽ 4. ՓԼ/ԱՖ ՌԻՍԿԻ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ և ԴՐԱՆՑ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ**



**4.1** Հանախորդին կամ գործարքն (գործարար հարաբերությունն) ուսումնասիրելիս Ընկերությունը դրանք դասակարգում է ըստ Ռիսկի բարձր, ցածր և միջին (ստանդարտ) չափանիշների:

**4.2** Ռիսկը գնահատվում է ըստ ռիսկը բնութագրող չափանիշի, իսկ մեկից ավելի չափանիշների առկայության դեպքում՝ դրանց համակցությամբ:

**4.3** Ռիսկը գնահատվում է ցածր, երբ առկա են միայն ցածր ռիսկի չափանիշներ: Ցածր ռիսկի չափանիշները վկայում են ՓԼ/ԱՖ-ի ցածր հավանականության մասին: Ցածր ռիսկի չափանիշներ են հետևյալ անձինք՝

**4.3.1** ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները,

**4.3.2** պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, պետական ոչ առևտրային կազմակերպությունները, պետական կառավարչական հիմնարկները, բացառությամբ այն մարմինների կամ կազմակերպությունների, որոնք գտնվում են այնպիսի երկրներում (տարածքներում), որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային պահանջները:

**4.4** Ռիսկը գնահատվում է Բարձր, երբ առկա է Բարձր ռիսկի թեկուզ մեկ չափանիշ: Բարձր Ռիսկի չափանիշներ են հետևյալ անձինք, դեպքերը կամ օբյեկտները՝

**4.4.1** Զաղաքական ազդեցություն ունեցող անձ, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ հանդիսացող հնարավոր կամ առկա Հանախորդը կամ Իրական շահառուն,

**4.4.2** Գործարքում կամ Գործարար հարաբերությունում ներգրավված իրավաբանական անձինք (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունները), որոնք գտնվում են այնպիսի երկրներում (տարածքներում), որտեղ (<< ԿԲ-ի և համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից սահմանված ցանկերի համաձայն) չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները,

**4.4.3** բարդ կամ անսովոր մեծ գումարով Գործարքները, անսովոր պայմաններով Գործարքները կամ Գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն,

**4.4.4** Գործարքում կամ Գործարար հարաբերությունում այնպիսի իրավաբանական անձի կամ կազմավորման ներգրավվածությունը, որոնց գործունեության ոլորտը ակտիվների անհատական տնօրինումն է,

**4.4.5** բարեգործական կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունները,

**4.4.6** Գործարքում կամ Գործարար հարաբերությունում այնպիսի ընկերության ներգրավվածությունը, որն ունի անվանատեր կամ ըստ ներկայացնողի բաժնետոմսեր,

**4.4.7** այն դեպքերը, երբ առկա է կանխիկ դրամի լայնամասշտաբ կիրառությամբ բնութագրվող բիզնես կամ Գործարար հարաբերություն,

**4.4.8** Գործարքում կամ Գործարար հարաբերությունում այնպիսի ընկերության ներգրավվածությունը, որն ունի սեփականատերերի արտասովոր կամ անհարկի բարդ կազմ,

**4.4.9** այն դեպքերը, երբ առաջանում են նույնականացման համար նախկինում ձեռքբերված տվյալների վերաբերյալ կասկածներ, այդ թվում՝ Իրական շահառուների առկայության և նրանց մասին տվյալների իսկության հետ կապված,

**4.4.10** Գործարքում ներգրավված են կամ շահագրգիռ են Հանախորդներ, որոնց հաշիվներով իրականացվում են միջոցների հանախակի և անբացատրելի շարժեր դեպի տարբեր ֆինանսական հաստատություններ,

**4.4.11** Գործարքում ներգրավված են կամ շահագրգիռ են Հանախորդներ, որոնց կողմից իրականացվող Գործարքների և/կամ Գործարար հարաբերությունների կառուցվածքը կամ բնույթը դժվարացնում է Իրական շահառուի բացահայտումը,

**4.4.12** Գործարքը կատարվում է որևէ իրավաբանական անձի հետ փոխկապակցված ֆիզիկական անձի և մեկ այլ իրավաբանական անձի միջև տվյալ իրավաբանական անձանց միջև պայմանագրային պարտավորությունների կատարման նպատակով,

**4.4.13** առանց առերես շփման Գործարքը և/կամ Գործարար հարաբերությունը,

**4.4.14** այն դեպքերը, երբ հայտնի է դառնում, որ Հանախորդի հետ Գործարար հարաբերության հաստատումը կամ Գործարքի կատարումը մերժվել է այլ ֆինանսական հաստատության կողմից,

**4.4.15** Այլ չափանիշներ:

**4.5** Հանախորդի կամ Գործարքի (Գործարար հարաբերության) ՓԼ/ԱՖ Ռիսկը գնահատվում է միջին այն դեպքում, երբ բացակայում են Բարձր կամ Ցածր Ռիսկի չափանիշները:

**4.6** Ռիսկը գնահատվում է բարձր այն դեպքում, երբ առկա է բարձր ռիսկի թեկուզ մեկ չափանիշ:

**4.7** Տարբեր ռիսկերի համար բնութագրական մի քանի չափանիշների միաժամանակ առկայության դեպքում ռիսկը գնահատվում է առկա չափանիշներից առավել բարձր ռիսկայինին համապատասխան:

**4.8** Արգելվում է Գործարքի կնքումը և/կամ գործարար հարաբերության հաստատումը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում առավել բարձր ռիսկայնությամբ բնութագրվող հետևյալ գործունեությունների տեսակներով զբաղվող անձանց հետ.

**4.8.1** Այն անձանց, ռազմական գերատեսչությունների և այլ կազմակերպությունների հետ, որոնք զբաղվում են զենք(եր)ի արտադրությամբ, առքուվաճառքով և/կամ օգտագործում են դրանք հարձակողական նպատակներով,

**4.8.2** Այն կազմակերպությունների հետ, որոնք ներգրավված են ցանկացած տեսակի թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների արտադրման, պատրաստման, վերամշակման, վաճառքի և առաքման մեջ, ինչպես նաև հարակից ձեռնարկությունների հետ, որոնք աջակցում են այս գործունեությանը:

**4.8.3** Ատոմային էներգիայի արտադրության ոլորտում գործող կազմակերպությունների հետ:

**4.8.4** Այն կազմակերպությունների հետ, որոնք մատուցում են «Առևտրի և ծառայությունների» մասին ՀՀ օրենքով նախատեսված սահմանափակման ենթակա ծառայություններ:

**4.8.5** Այն բանկերի հետ, որոնք չունեն ֆիզիկական ներկայություն այն երկրում, որտեղ այն գրանցված և լիցենզավորված է, և որը փոխկապակցված չէ որևէ կարգավորվող ֆինանսական խմբի հետ, որը ենթակա է արդյունավետ համախմբված վերահսկողության. «Ֆիզիկական ներկայություն» նշանակում է ղեկավար անձնակազմի ներկայությունը տվյալ երկրում. տեղական գործակալի կամ ոչ ղեկավար անձնակազմի առկայությունը չի նշանակում ֆիզիկական ներկայություն.

**4.8.6** Չկարգավորվող բարեգործական կազմակերպությունների հետ, որոնք չեն ենթակվում որևէ պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմնի վերահսկողության,

**4.8.7** Վիրտուալ ակտիվների (կրիպտոակտիվների) ծառայություններ մատուցող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ, ովքեր իրականացնում են հետևյալ գործողություններից կամ գործառնություններից մեկը կամ մի քանիսը այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար կամ անունից.

4.8.7.1 փոխանակում վիրտուալ ակտիվների և ֆիստ արժույթների միջև.

4.8.7.2 Փոխանակում վիրտուալ ակտիվների մեկ կամ մի քանի ձևերի միջև.

4.8.7.3 վիրտուալ ակտիվների փոխանցում;

4.8.7.4 վիրտուալ ակտիվների կամ վիրտուալ ակտիվների նկատմամբ վերահսկողության հնարավորություն տրամադրող գործիքների պահպանում և/կամ կառավարում;

4.8.7.5 վիրտուալ ակտիվների թողարկման և/կամ վաճառքի հետ կապված ֆինանսական ծառայությունների տրամադրում:

**4.9** Ընկերությունը հետևյալ ոլորտների ընկերությունների համար իրականացնում է Հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն Գործարքի կնքումը և/կամ Գործարար հարաբերությունների հաստատումն իրականացնում որոշակի սահմանափակումներով.

**4.9.1** Վիճակախաղերի և շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների ոլորտ, որը ներառում է ինչպես ֆիզիկական ներկայություն ունեցող կազմակերպությունները այնպես էլ առցանց և հեռահար դրամախաղային բիզնեսները:

Ընկերությունը Գործարք չի կնքում և/կամ Գործարար հարաբերություն չի հաստատում տվյալ ոլորտում գործող այն անձանց հետ, որոնք պատշաճ կերպով լիցենզավորված չեն և/կամ չունեն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաճախորդի ուսումնասիրության համար կիրառվող նվազագույն ընթացակարգեր:

**4.9.2** Դրամական միջոցների կամ այլ ֆինանսական գործիքների փոխանցման ծառայությունների (MVTs) ոլորտ, որը վերաբերում է այն ֆինանսական ծառայություններին (բացառությամբ բանկերի), որոնք ենթադրում են կանխիկ դրաման միջոցների, չեկերի և այլ վճարային գործիքների կամ այլ համարժեք միջոցների ընդունում և համապատասխան գումարի վճարում շահառուին կանխիկ կամ այլ ձևով՝ հաղորդագրության, փոխանցման կամ այն քիթինգային ցանցի միջոցով, որին պատկանում է համապատասխան ֆինանսական ծառայություններ մատուցողը::

Ընկերությունը Գործարք չի կնքում և/կամ Գործարար հարաբերություն չի հաստատում տվյալ ոլորտում գործող այն անձանց հետ, որոնք պատշաճ կերպով լիցենզավորված չեն և/կամ չունեն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաճախորդի ուսումնասիրության համար կիրառվող նվազագույն ընթացակարգեր:

**4.9.3** Վճարային ծառայություններ մատուցող անձինք, որոնք որպես վճարման մշակման պրոցեսի երրորդ կողմ, թույլ են տալիս առևտրային գործունեություն իրականացնող անձանց ընդունել վճարումներ տարբեր տեսակի օնլայն վճարման մեթոդներով:

Ընկերությունը Գործարք չի կնքում և/կամ Գործարար հարաբերություն չի հաստատում տվյալ ոլորտում գործող այն անձանց հետ, որոնք պատշաճ կերպով լիցենզավորված չեն և/կամ չունեն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաճախորդի ուսումնասիրության համար կիրառվող նվազագույն ընթացակարգեր:

**4.10** Հաճախորդի հետ Գործարար հարաբերության ընթացքում Ռիսկի որևէ նոր չափանիշ ի հայտ գալու դեպքում Ընկերության Ներքին դիտարկումների աշխատակիցը վերանայում է տվյալ Ռիսկի գնահատումը և Ռիսկի փոփոխության դեպքում իրականացնում է նոր որոշված Ռիսկի համար Օրենքով և սույն Կանոնակարգով նախատեսված Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրության միջոցառումներ:

**4.11** Ընկերության հաճախորդների հետ անմիջական կապ հաստատող պատասխանատու աշխատակիցը Ընկերության Հաճախորդի վերաբերյալ տեղեկություններ ստանալու օրվանից մինչև հաջորդ աշխատանքային օրը վերջինիս դասակարգում է ըստ Ռիսկի՝ Բարձր, Ցածր կամ Միջին (ստանդարտ) չափանիշների: Այն դեպքում, երբ Ընկերության աշխատակցի կարծիքով Հաճախորդը պետք է որակվի որպես Բարձր Ռիսկի չափանիշների Հաճախորդ, նա այդ մասին անմիջապես տեղեկացնում է Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցին, իսկ Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցից պահանջ

ստանալու դեպքում՝ նրան է տրամադրում այն տեղեկությունները, որոնք հիմք են հանդիսացել Հաճախորդին Բարձր Ռիսկի չափանիշների Հաճախորդ դիտարկելու համար:

**4.12** Ընկերության հաճախորդների հետ անմիջական կապ հաստատող պատասխանատու աշխատակիցը Ընկերության Հաճախորդի համար իրականացվելիք Գործարքի կամ Գործարար հարաբերության վերաբերյալ տեղեկություններ (հայտ կամ հանձնարարական) ստանալու պահից մինչև հայտով կամ հանձնարարականով նախատեսված Գործարքի կատարումը, այն դասակարգում է ըստ Ռիսկի՝ Բարձր, Ցածր կամ Միջին (ստանդարտ) չափանիշների: Այն դեպքում, երբ Ընկերության աշխատակցի կարծիքով այդ Գործարքը (Գործարար հարաբերությունը) պետք է որակվի որպես Բարձր Ռիսկի չափանիշների Գործարք, նա այդ մասին անմիջապես տեղեկացնում է Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցին, իսկ Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցից պահանջ ստանալու դեպքում՝ նրան է տրամադրում այն տեղեկությունները, որոնք հիմք են հանդիսացել Հաճախորդին Բարձր Ռիսկի չափանիշների Գործարք (Գործարար հարաբերություն) դիտարկելու համար:

**4.13** Ընկերությունը տարին մեկ անգամ վերանայում է իր՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հնարավոր և առկա ռիսկերը:

## **ԳԼՈՒԽ 5. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ, ՊԱՏՃԱՃ ԵՎ ՀԱՎԵԼՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ՌԻՍԿԵՐԻ ԲԱՅՑՀԱՅՏՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

**5.1** Ընկերությունը Հաճախորդի (Լիազորված անձի) հետ Գործարար հարաբերության հաստատումը կամ Հաճախորդի հետ Միանգամյա Գործարքի կնքումն իրականացնում է Հաճախորդի նույնականացման համար սույն Կանոնակարգով և Օրենքով նախատեսված տեղեկությունները և փաստաթղթերը ստանալուց և Հաճախորդի ինքնությունը ստուգելուց հետո: Ընկերությունը առանց նախապես ինքնության ստուգման Գործարար հարաբերություն չի հաստատում կամ Միանգամյա գործարք չի կատարում:

**5.2** Հաճախորդի հետ անմիջական կապ հաստատող աշխատակիցը Հաճախորդին նույնականացնում և նրա ինքնությունը ստուգում է պետական իրավասու մարմնի տված արժանահավատ ու վավեր փաստաթղթերի և այլ տեղեկությունների հիման վրա: Հաճախորդին (Լիազորված անձին) նույնականացնելիս և ինքնությունը ստուգելիս՝

**5.2.1** Ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար անձը հաստատող փաստաթղթի կամ բացառապես լուսանկարով պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա ձեռք բերվող տեղեկությունն առնվազն պետք է ներառի՝ անձի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում), ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, իսկ անհատ ձեռնարկատերերի համար՝ նաև հաշվառման համարը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև օրենսդրությամբ և Ընկերության այլ ներքին իրավական ակտերով պահանջվող այլ տեղեկություններ, Հաճախորդի հետ անմիջական կապ հաստատող աշխատակիցը պետք է պարզի նաև Հաճախորդի բնակության վայրը,

**5.2.2** իրավաբանական անձանց համար պետական գրանցման փաստաթղթի կամ պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա ձեռք բերվող տեղեկությունները պետք է առնվազն ներառեն իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն), գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը և, առկայության դեպքում հարկ վճարողի հաշվառման համարը, կանոնադրությունը, առկայության դեպքում՝ վերջինիս փոփոխություններն ու լրացումները, լիցենզավորման ենթակա գործունեության դեպքում՝ համապատասխան լիցենզիան/արտոնագիրը (թույլտվություն), ինչպես նաև օրենսդրությամբ և Ընկերության այլ ներքին իրավական ակտերով ըստ անհրաժեշտության պահանջվող այլ տեղեկություններ և փաստաթղթեր,

**5.2.3** պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի համար ձեռք բերվող տեղեկությունները պետք է առնվազն ներառեն պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի լրիվ պաշտոնական անվանումը և երկիրը:

**5.3** Ընկերության հետ Գործարար հարաբերություն հաստատելու դեպքում Հանախորդի կողմից լրացվում է «Հանախորդին ճանաչելու և նույնականացնելու վերաբերյալ հարցաթերթիկը» համաձայն Ընկերության FATCA պահանջների պահպանման մեխանիզմների ներդրման և ապահովման քաղաքականության համապատասխան հավելվածների:

**5.4** Սույն Կանոնակարգի 5.3 կետի համաձայն լրացված հարցաթերթիկի էլեկտրոնային տարբերակը և նույնականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերը, Հանախորդի հետ անմիջական կապ հաստատող աշխատակցի կողմից մուտքագրվում են ԴԲ ծրագրային համակարգի հանախորդային բաժնում:

**5.5** Հանախորդի նույնականացման ընթացքում ձեռք բերված տեղեկությունները ստուգվում են Հանախորդի հետ անմիջական կապ հաստատող աշխատակցի, իսկ անհրաժեշտության դեպքում ՆԴՄ-ի և այլ ստորաբաժանումների ու աշխատակիցների կողմից՝ համաձայն Կանոնակարգի:

**5.6** Հանախորդի հետ անմիջական կապ հաստատող աշխատակցի կողմից ՆԴՄ-ին ուղարկած էլեկտրոնային գրության հիման վրա ՆԴՄ-ի կողմից ստացված դրական պատասխանի առկայության դեպքում և նույնականացման համար պահանջվող տեղեկությունների հիման վրա Հանախորդի ինքնությունը ստուգվում է Գործարար հարաբերություն հաստատելու ընթացքում կամ դրանից հետո ողջամիտ, բայց ոչ ավելի, քան յոթնօրյա ժամկետում, եթե ռիսկն արդյունավետորեն կառավարվում է, և դա անհրաժեշտ է Հանախորդի հետ բնականոն Գործարար հարաբերությունները չխափանելու նպատակով:

**5.7** Հանախորդի (Լիազորված անձի) Պատշաճ ուսումնասիրությունը պարտադիր է հետևյալ դեպքերում՝

**5.7.1** Հանախորդի (Լիազորված անձի) հետ հաստատվում է Գործարար հարաբերություն,

**5.7.2** կատարվում է Միանգամյա Գործարք,

**5.7.3** կասկածներ են առաջանում Հանախորդի (Լիազորված անձի) նույնականացմանը վերաբերող՝ նախկինում ձեռք բերված տեղեկությունների (փաստաթղթերի) հավաստիության կամ ամբողջականության վերաբերյալ,

**5.7.4** կասկածներ են առաջանում ՓԼ/ԱՖ վերաբերյալ:

**5.8** Սույն Կանոնակարգի 5.7 կետով նախատեսված դեպքերում Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցն իրականացնում է Հանախորդի Պատշաճ ուսումնասիրություն՝ ձեռնարկելով ՓԼ/ԱՖ Ռիսկին համապատասխան միջոցառումներ: Հանախորդի Պատշաճ ուսումնասիրության ընթացքում Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցն իրականացնում է առկա կամ հնարավոր Հանախորդի և վերջինիս հետ Գործարքի դիտանցում, որպեսզի հավաստիանա Հանախորդի, նրա Գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկատվության, իսկ անհրաժեշտության դեպքում՝ եկամուտների աղբյուրի իսկության հարցում:

**5.9** Հանախորդի Պատշաճ ուսումնասիրության գործընթացը ներառում է Հանախորդին (Լիազորված անձին կամ Իրական շահառուին) նույնականացնելը և նրա ինքնությունը ստուգելը, Գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը պարզելը և Գործարար հարաբերության ողջ ընթացքում (ներառյալ Հանախորդի հետ Գործարար հարաբերություն հաստատելու պահը) ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն իրականացնելը:

**5.10** Այն դեպքում, երբ Հանախորդը դասակարգվել է որպես Ցածր Ռիսկի չափանիշի Հանախորդ, Ընկերության Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցն իրականացնում է Հանախորդի Պարզեցված ուսումնասիրություն: Հանախորդի Պարզեցված ուսումնասիրությունը ներառում է Հանախորդի վերաբերյալ հետևյալ տեղեկությունների հավաքագրումն ու ուսումնասիրությունը.

**5.10.1** ֆիզիկական անձ Հանախորդի դեպքում՝

**5.10.1.1** անունը, ազգանունը,

**5.10.1.2** անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

**5.10.1.3** Լիազորված անձի վերաբերյալ 5.10.1.1-5.10.1.2 կետերով նախատեսված տեղեկությունները (առկայության դեպքում):

**5.10.2** իրավաբանական անձ Հանախորդի դեպքում՝

**5.10.2.1** անվանումը,

**5.10.2.2** պետական գրանցման վկայականի համարը,

**5.10.2.3** հաշիվը տնօրինելու իրավասություն ունեցող և/կամ լիազոր անձին նույնականացնող տեղեկությունները:

**5.11** Այն դեպքում, երբ Հանախորդի հետ Գործարար հարաբերություններ հաստատելիս վերջինս դասակարգվում է որպես Ցածր ռիսկային խմբի չափանիշների Հանախորդ՝ Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցն իրականացնում է Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության նվազեցված միջոցառումներ:

**5.12** Ցածր Ռիսկի դեպքում ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցը ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.

**5.12.1** ստուգում է Գործարքի կամ Գործարար հարաբերության առնչությամբ Հանախորդից պահանջվող տեղեկությունների և փաստաթղթերի իսկությունը և հավաստիությունը՝ հիմք ընդունելով Հանախորդի տրամադրած տեղեկատվությունը,

**5.12.2** համադրում է Հանախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր Գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները միայն այն դեպքում, երբ դրանք գերազանցում են Հանախորդի Գործարար բնութագրի տեսանկյունից ողջամիտ գումարային սահմանաչափը,

**5.12.3** պարզում է Հանախորդների, Գործարքների և Գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել Միջին կամ Բարձր ռիսկի Հանախորդների, Գործարքների կամ Գործարար հարաբերությունների հետ կապեր:

**5.13** Միջին Ռիսկի դեպքում Ընկերության Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցն իրականացնում է Հանախորդի Պատշաճ ուսումնասիրություն և ձեռնարկում Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության կանոնավոր միջոցառումներ:

**5.14** Միջին Ռիսկի դեպքում Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցն ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում Հանախորդի հետ Գործարքների դիտանցման նպատակով ձեռնարկում է հետևյալ միջոցառումները.

**5.14.1** ստուգում է Գործարքի կամ Գործարար հարաբերության առնչությամբ Հանախորդից պահանջվող տեղեկությունների և փաստաթղթերի իսկությունը և հավաստիությունը՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարելով հարցումներ իրավասու մարմիններից և Օրենքի իմաստով այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներից,

**5.14.2** առնվազն տարին մեկ անգամ համադրում է Հանախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր Գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները,

**5.14.3** առնվազն տարին մեկ անգամ պարզում է Հանախորդների, Գործարքների և Գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը,

**5.14.4** ստուգում է Գործարքի կամ Գործարար հարաբերության համադրելիությունը Հանախորդի Գործարար բնութագրին:

**5.14.5** պարզում է Հանախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը:

**5.15** Ընկերության Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցն իրականացնում է Հանախորդի Հավելյալ ուսումնասիրություն այն դեպքերում, երբ Հանախորդը և (կամ) նրա կողմից իրականացված Գործարքը դասակարգվել են Բարձր Ռիսկի չափանիշների, ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Հանախորդի հավելյալ

ուսումնասիրության իրականացման հանձնարարականի ստացման դեպքում: Հավելյալ ուսումնասիրության իրականացման դեպքում ի լրումն Հանախորդի Պատշան ուսումնասիրությամբ սահմանված գործողությունների, Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցը նաև՝

**5.15.1** իրականացնում է Իրական շահառուի առկայության պարզում Կանոնակարգով սահմանված համապատասխան ձևաչափով Հանախորդի կողմից լրացված հայտարարության հիման վրա՝ համաձայն «Հանախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգի» Հավելված 1-ի,

**5.15.2** ստանում է Ընկերության Ավագ Ղեկավարության հավանությունը Հանախորդի հետ Գործարար հարաբերություն հաստատելուց առաջ Գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ Հանախորդը կամ Իրական Շահառուն բնութագրվում է Բարձր Ռիսկի չափանիշով, կամ Գործարարը կամ Գործարար հարաբերությունը ներառում են այդպիսի չափանիշ,

**5.15.3** ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Հանախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար,

**5.15.4** մանրամասն ուսումնասիրում է Գործարքի կամ Գործարար հարաբերության նախապայմանները և նպատակը,

**5.15.5** Քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում իրականացնում է ընթացիկ հավելյալ դիտարկում:

**5.16** Գործարար հարաբերության ընթացիկ պատշան ուսումնասիրության շրջանակներում Հանախորդի հետ Գործարքների դիտանցման նպատակով Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցը Բարձր ռիսկի դեպքում ձեռնարկում է հետևյալ խորացված միջոցառումները.

**5.16.1** Գործարքի կամ Գործարար հարաբերության առնչությամբ Հանախորդից պահանջվող տեղեկությունների և փաստաթղթերի իսկությունը և հավաստիությունը ստուգելիս պահանջում է անհրաժեշտ տեղեկություններ (ներառյալ՝ լրացուցիչ փաստաթղթեր), օգտվում է տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից, կատարում է հարցումներ հնարավոր մեծ թվով իրավասու մարմիններից և այլ հաշվետու անձանցից, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներից,

**5.16.2** Հանախորդի՝ տարբեր Գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները համադրելիս ընտրում է հնարավորինս երկար կամ մի քանի համադրելի միավոր ժամանակահատված,

**5.16.3** առնվազն 6 ամիսը մեկ անգամ (Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց դեպքում՝ 3 ամիսը մեկ անգամ) Հանախորդների, Գործարքների և Գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը պարզելիս կատարում է դրանց բազմաստիճան վերլուծություն, այդ թվում՝ հնարավոր անուղղակի կապերը բացահայտելու նպատակով,

**5.16.4** Հանախորդի Գործարար բնութագրին որևէ Գործարքի կամ Գործարար հարաբերության համադրելիությունը ստուգելիս պահանջում է դրանց շրջանակներում կատարված գործողությունները լիարժեքորեն հիմնավորող տեղեկություններ և փաստաթղթեր:

**5.17** Հանախորդի Հավելյալ ուսումնասիրություն իրականացնելիս Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցն առնվազն պահանջում է՝

**5.17.1** ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձի համար՝

**5.17.1.1** Անձը հաստատող փաստաթուղթ,

**5.17.1.2** Հանրային ծառայությունների համարանիշ պարունակող փաստաթուղթ կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համար,

**5.17.1.3** Հայտարարություն Հանախորդի (շահառուի) ակտիվների և միջոցների ծագման աղբյուրների մասին, որն անհրաժեշտ է հավելյալ ուսումնասիրության

և վերլուծության համար,

**5.17.1.4** Լրացուցիչ փաստաթղթեր, պայմանագրեր, վճարումների ստացականներ կամ այլ հիմնավորող փաստաթղթեր:

**5.17.2** Օտարերկրյա ֆիզիկական անձի համար՝

**5.17.2.1** Օտարերկրյա պետության անձնագիրը կամ անձը (ինքնությունը) հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթուղթ կամ հատուկ անձնագիրը կամ կացության քարտը,

**5.17.2.2** Նույնականացման քարտ (առկայության դեպքում),

**5.17.2.3** Հայտարարություն Հանախորդի (շահառուի) ակտիվների և միջոցների ծագման աղբյուրների մասին, որն անհրաժեշտ է հավելյալ ուսումնասիրության և վերլուծության համար,

**5.17.2.4** Լրացուցիչ փաստաթղթեր, պայմանագրեր, վճարումների ստացականներ կամ այլ հիմնավորող փաստաթղթեր:

**5.17.3** ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձի համար՝

**5.17.3.1** Պետական գրանցման վկայական,

**5.17.3.2** Հարկ վճարողի հաշվարկային համարը պարունակող փաստաթուղթ (եթե պետական գրանցման վկայականը տվյալներ չի պարունակում ՀՎՀՀ-ի վերաբերյալ),

**5.17.3.3** Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի, բանկային հաշիվները տնօրինելու և(կամ) ստորագրելու իրավասություն ունեցող անձանց ցանկը, նույնականացնող փաստաթղթերը և ստորագրությունների նմուշները, հաստատված ընկերության համապատասխան իրավասություն ունեցող մարմնի կողմից,

**5.17.3.4** Լրացուցիչ փաստաթղթեր, պայմանագրեր, վճարումների ստացականներ կամ այլ հիմնավորող փաստաթղթեր:

**5.17.4** Օտարերկրյա իրավաբանական անձի համար՝

**5.17.4.1** Գրանցման վկայականը և (կամ) հիմնադիր այլ փաստաթուղթ,

**5.17.4.2** Քաղվածք՝ գրանցման երկրի առևտրային գրանցամատյանից կամ օտարերկրյա իրավաբանական անձի իրավական կարգավիճակը հաստատող այլ համազոր փաստաթուղթ, որի վաղեմության ժամկետը չպետք է գերազանցի 12 ամիսը,

**5.17.4.3** Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի, հաշիվները տնօրինելու և(կամ) ստորագրելու իրավասություն ունեցող անձանց ցանկը, նույնականացնող փաստաթղթերը և ստորագրությունների նմուշները, հաստատված ընկերության համապատասխան իրավասություն ունեցող մարմնի կողմից,

**5.17.4.4** Հայտարարություն-տեղեկանք ընկերության նշանակալից մասնակիցների (բաժնետերերի) նաև շահառուների ակտիվների և միջոցների ծագման աղբյուրների մասին, որոնք անհրաժեշտ կհամարվեն հավելյալ ուսումնասիրության և վերլուծության համար,

**5.17.4.5** Լրացուցիչ փաստաթղթեր, պայմանագրեր, վճարումների ստացականներ կամ այլ հիմնավորող փաստաթղթեր:

**5.18** Երբ Հանախորդի նույնականացման ժամանակ պարզվում է, որ վերջինս համապատասխանում է Բարձր ռիսկի չափանիշներին, այդ Հանախորդի հաշիվներն ակտիվացվում են միայն ՆԴՄ-ի թույլտվությամբ հավելյալ պատշաճ վերլուծության իրականացումից հետո, մասնավորապես ՆԴՄ-ն իրականացնում է հետևյալ միջոցառումները՝

**5.18.1** առավել ամբողջական ու խորացված ստուգում է Հանախորդի հետ Գործարար հարաբերություններ հաստատելիս պահանջվող փաստաթղթերի (տեղեկությունների) իսկությունը՝ պահանջելով հիմնավորող այլ փաստաթղթեր (տեղեկություններ),



**5.18.2** պահանջում է հաճախորդի ակտիվների և միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ տեղեկություններ,

**5.18.3** տվյալների բազաներով կատարում է Հաճախորդի, Գործարար հարաբերության և Գործարարի վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն,

**5.18.4** հաշվետվություն տրամադրող այլ անձանց, այդ թվում օտարերկրյա գործընկերներին հարցումներ է կատարում՝ ճշտելու Հաճախորդի, նրա հետ Գործարար հարաբերությունների և Միանգամյա գործարքների վերաբերյալ տեղեկությունները,

**5.18.5** իրականացնում է Գործարքների խորացված մոնիտորինգ,

**5.18.6** ձեռնարկում է այլ միջոցներ Հաճախորդի, նրա հետ Գործարար հարաբերությունների ու Գործարքների վերաբերյալ իրական ու ամբողջական պատկերացում կազմելու համար:

**5.19** Առանց առերես շփման Գործարար հարաբերությունները կարգավորվում են Ընկերության «Առանց առերես շփման Գործարար հարաբերությունների հաստատման» ներքին ընթացակարգով, ինչպես նաև առանց առերես շփման Գործարար հարաբերություններ հաստատելիս Ընկերությունը Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրության շրջանակներում պահանջում է, որ առաջին վճարումը կատարվի այնպիսի ֆինանսական հաստատությունում Հաճախորդի անվամբ բացված հաշվով, որը

**5.19.1** իրավասու է և կարող է ըստ պահանջի անմիջապես տրամադրել Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները, ներառյալ՝ փաստաթղթերի պատճենները,

**5.19.2** ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից ենթակա է պատշաճ կարգավորման ու վերահսկողության, ինչպես նաև ունի Օրենքով և Լիազոր մարմնի կողմից ընդունված իրավական ակտերով սահմանված՝ Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրության և տեղեկությունների պահպանման արդյունավետ ընթացակարգեր,

**5.19.3** չի գտնվում այնպիսի երկրում կամ տարածքում, որտեղ (Լիազոր մարմնի հրապարակած ցանկերին համապատասխան) չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային պահանջները, կամ այդպիսի երկրներից կամ տարածքներից չէ:

**5.20** Ընկերությունը մինչև Գործարար հարաբերության հաստատումը կամ Միանգամյա Գործարքի կնքումը պարզում է Հաճախորդի գործարար բնութագիրը, ինչպես նաև ճշտում է Գործարքի կամ Գործարար հարաբերության տեսակը և նախատեսվող բնույթը:

**5.21** Ընկերությունը միջոցներ է ձեռնարկում պարզելու համար, թե արդյոք Հաճախորդը, նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ փոխկապակցված անձը հանդիսանում է Զաղաքական ազդեցություն ունեցող անձ՝ Հաճախորդների տվյալները ստուգելով միջազգային ցանկերի դեմ, հատկապես ՄԱԿԻ անվտանգության խորհրդի բանաձևերի, OFAC, EU, UK, Լիազոր մարմնի կողմից տրամադրված ներքին ցանկեր, World Check տվյալների բազա, ինչպես նաև այդ նպատակով հայերեն, ռուսերեն, անգլերեն կամ այլ լեզուների տառադարձով համացանցում (Google, Facebook, Twitter, LinkedIn և այլն) անհրաժեշտ որոնողական ուսումնասիրություններ իրականացնելու միջոցով:

**5.22** Ընկերությունը մինչև Գործարար հարաբերության հաստատումը կամ Միանգամյա Գործարքի կնքումը պարզում է Իրական շահառուի առկայությունը և առկայության դեպքում նույնականացնում է Իրական շահառուին և ստուգում է նրա ինքնությունը: Իրավաբանական անձ Հաճախորդների դեպքում Ընկերությունը Իրական շահառուին պարզելու նպատակով լիարժեք տեղեկատվություն է ձեռք բերում իրավաբանական անձի (բացառությամբ արժեթղթերի կարգավորման օրենսդրությամբ նախատեսված հաշվետու թողարկողների) մասնակիցների և կառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ: Իրական շահառուի առկայությունը պարզելիս լրացվում է «Իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարություն» Հավելվածի 5-ին համապատասխան: «Իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ հայտարարություն»-ը Գործարար հարաբերության ընթացքում լրացվում է նաև, երբ ի հայտ է գալիս Իրական շահառու, կամ երբ Իրական շահառուն փոխվում է:

**5.23** Այն դեպքում, երբ Հանախորդը դասակարգվել է որպես Ցածր ռիսկային չափանիշների Հանախորդ, Իրական շահառուի նույնականացման և ինքնության ստուգման նկատմամբ կիրառվում են սույն Կանոնակարգով Ցածր ռիսկային չափանիշների Հանախորդների համար նախատեսված պահանջները:

**5.24** Ընկերությունը պարզում է օտարերկրյա իրավաբանական անձ կամ օտարերկրյա ֆիզիկական անձ Հանախորդի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող Հանախորդի կենսական շահերի կենտրոնը: Կենսական շահերի կենտրոնը պարզելիս լրացվում է «Կենսական շահերի կենտրոնի վերաբերյալ հայտարարություն»՝ «Հանախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման» կանոնակարգի Հավելված 1-ին համապատասխան: «Կենսական շահերի կենտրոնի վերաբերյալ հայտարարություն»-ը Գործարար հարաբերության ընթացքում լրացվում է նաև, երբ փոխվում է սկզբնական հայտարարությամբ ներկայացված կենսական շահերի կենտրոնը:

**5.25** Օրենքով նախատեսված պայմանների առկայության դեպքում Հանախորդի Պատշաճ ուսումնասիրությունն իրականացնելիս Ընկերության համար հիմք կարող են ծառայել Օրենքի իմաստով այլ ֆինանսական հաստատության կամ ոչ ֆինանսական հաստատության կամ անձի կողմից Հանախորդի Պատշաճ ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները:

**5.26** Ընկերությունը Հանախորդի հետ կարող է իրականացնել Գործարար հարաբերություններ, կնքել Գործարքներ՝ ներառյալ Միանգամյա գործարքներ բացառապես Ընկերությունում հաշիվ բացելուց հետո: Հաշիվ կարող է բացվել նաև առցանց (Ընկերության կայքէջում կամ տրամադրված հղմամբ): Այն դեպքերում, երբ Հանախորդը հաշիվը ցանկանում է բացել առանց Ընկերության աշխատակիցների հետ առերես շփման՝ առցանց դիմում լրացնելով, Հանախորդը կայքէջում հաշվի բացման դիմումը լրացնելիս կներբեռնի ստորև նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները, մասնավորապես՝

**5.26.1** Ֆիզիկական անձանց համար՝

**5.26.1.1** անձը հաստատող փաստաթուղթ կամ բացառապես լուսանկարով՝ պաշտոնական այլ փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ),

**5.26.1.2** անձի բնակության հասցեն փաստող՝ երրորդ անձի կողմից տրամադրված փաստաթուղթ, մասնավորապես, Հանախորդի վերաբերյալ բանկային տեղեկանք կամ բանկի հաշվի քաղվածքը, կոմունալ ծառայությունների համար կատարվող վճարման քաղվածք, որտեղ հստակ երևում է անունը, ազգանունը և նրա բնակության հասցեն, ինչպես նաև սույն կետի պահանջներին բավարարող այլ փաստաթուղթ: Մույն կետով ներկայացվող փաստաթուղթը պետք է լինի տրամադրված ոչ շուտ, քան Ընկերության այն ներկայացնելուն նախորդող 3 ամիսների ընթացքում: Մույն կետի պահանջը չի գործում այն դեպքերում, երբ հանախորդի՝ անձը հաստատող փաստաթուղթը պարունակում է տեղեկատվություն նրա բնակության վայրի մասին:

**5.26.1.3** տեղեկատվություն՝ անձի գործարար բնութագրի, գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի վերաբերյալ,

**5.26.1.4** ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձի համար՝ կենսական շահերի կենտրոնի մասին տեղեկատվություն,

**5.26.1.5** իրական շահառուի մասին հայտարարություն, այդ թվում՝ իրական շահառուի վերաբերյալ սույն ենթականոնի 5.26.1.1-5.26.1.4 ենթակետերում նշված փաստաթուղթը և տեղեկատվությունները,

**5.26.1.6** տեղեկատվություն, թե արդյոք անձը հանդես է գալիս իր անունից թե ուրիշի անունից: Այլ անձի անունից հանդես գալու դեպքում՝ լիազորությունները հաստատող փաստաթուղթը և լիազորող անձի վերաբերյալ սույն ենթականոնի 5.26.1.1-5.26.1.4 ենթակետերում նշված փաստաթուղթը և տեղեկությունները:

**5.26.2** Իրավաբանական անձանց համար՝

**5.26.2.1** պետական գրանցման փաստաթուղթը կամ գրանցման վերաբերյալ այլ պաշտոնական փաստաթղթերը, որոնք առնվազն պետք է ներառեն իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, անհատականացման

համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն), գործադիր մարմնի ղեկավարի անունը և առկայության դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը

**5.26.2.2** Ընկերության կանոնադրությունը կամ կառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ այլ փաստաթուղթ,

**5.26.2.3** իրական շահառուի վերաբերյալ (բացառությամբ արժեթղթերի շուկայի կարգավորման օրենսդրությամբ նախատեսված հաշվետու թողարկողների) տեղեկատվությունը, ինչպես նաև իրական շահառուի վերաբերյալ 5.26.1.1-5.26.1.4 ենթակետերում նշված այլ փաստաթղթերը,

**5.26.2.4** Ընկերության անունից հանդես եկող անձի լիազորությունները հաստատող փաստաթուղթը, ինչպես նաև ընկերության անունից հանդես եկող անձի վերաբերյալ 5.26.1.1-5.26.1.4 ենթակետերում նախատեսված փաստաթղթերը և տեղեկատվությունը,

**5.26.2.5** տեղեկատվություն՝ իրավաբանական անձի գործարար բնութագրի, գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի վերաբերյալ,

**5.26.2.6** հաճախորդի փաստացի գործունեության հասցեն,

**5.26.2.7** ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպության համար՝ կենսական շահերի կենտրոնի մասին տեղեկատվություն:

**5.27** Ընկերությունը գործարար հարաբերության ամբողջ ընթացքում իրականացնում է դրա ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը: Ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը ներառում է Հաճախորդի (Լիազորված անձի) հետ գործարքների դիտանցումը՝ Հաճախորդի, նրա գործարար բնութագրի և ռիսկայնության վերաբերյալ առկա տեղեկությունների հավաստիության, այլ տեղեկությունների հետ Հաճախորդի գործունեության համադրելիության, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ Հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրի իսկության հարցում հավաստիանալու նպատակով: ՆԴՄ-ն դիտանցումը կատարում է գործարար հարաբերության ամբողջ ընթացքում (ներառյալ՝ Հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու պահը): Նշված միջոցառումները ձեռնարկվում են հետևյալ պարբերականությամբ՝

**5.27.1** երեք ամիսը մեկ անգամ՝ Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց դեպքում,

**5.27.2** վեց ամիսը մեկ անգամ՝ Բարձր ռիսկի դեպքում,

**5.27.3** տարին մեկ անգամ՝ Միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում:

**5.28** Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակում հավաքված տեղեկությունների (բացառությամբ հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների, որոնք թարմացվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ) թարմացումը կատարվում է հետևյալ պարբերականությամբ.

**5.28.1** երեք ամիսը մեկ անգամ՝ Քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում,

**5.28.2** վեց ամիսը մեկ անգամ՝ Բարձր ռիսկի դեպքում,

**5.28.3** տարին մեկ անգամ՝ Միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում,

**5.28.4** երկու տարին մեկ անգամ՝ Ցածր ռիսկի դեպքում:

**5.29** Հաճախորդի գործարար բնութագիրը պարզելիս ՆԴՄ-ն պետք է հավաստիանա, որ բավարար տեղեկություններ է ձեռք բերել Հաճախորդի՝ Քաղաքական ազդեցություն ունեցող անձ լինելու հանգամանքը պարզելու համար:

**5.30** Հաճախորդի հետ անմիջական կապ հաստատող աշխատակիցները Գործարք կատարելիս կամ Գործարար հարաբերություն հաստատելիս պետք է գործեն սույն Կանոնակարգի Հավելված 5-ով սահմանված քայլերի հաջորդականությամբ:

## **ՊԼՈՒԽ 6. ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐՔԸ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՐԱԿԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ (ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ)**

**6.1** Ընկերությունը Լիազոր մարմնին է ներկայացնում հետևյալ գործարքների վերաբերյալ հաշվետվություններ՝

**6.1.1** անկանխիկ գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 20 միլիոն ՀՀ դրամը,

**6.1.2** կանխիկի հետ կապված գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 5 միլիոն ՀՀ դրամը,

**6.1.3** Կասկածելի գործարքներ կամ գործարար հարաբերություններ, անկախ 6.1.1 և 6.1.2 ենթակետերով նախատեսված գործարքի գումարի չափից:

**6.2** Արգելվում է այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկատվություն է տրամադրվում Լիազոր մարմնին, ինչպես նաև այլ անձանց հայտնել հաշվետվության կամ այդ տեղեկատվության տրամադրման փաստի մասին:

**6.3** Սույն Կանոնակարգի 6.1 կետով նախատեսված հաշվետվությունների կազմման և Լիազոր մարմնին տրամադրման կարգը սահմանվում է Օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, Կանոնակարգով և դրա հիման վրա ընդունված այլ ներքին իրավական ակտերով:

**6.4** Սույն Կանոնակարգի 6.1 կետով նախատեսված հաշվետվությունների կազմումն ապահովելու համար, Ընկերության աշխատակիցները Գործարքը կատարելու կամ Կասկածելի Գործարքի հիմքը (Գործարար հարաբերությունը) հայտնաբերելու օրը Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցին են տրամադրում հաշվետվությունը կազմելու և Լիազոր մարմնին ներկայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները:

**6.5** Գործարքը կամ Գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը իրականացվում է ՆԴԾ-ի կողմից՝ Կանոնակարգով, Օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

**6.6** Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու գործընթացը սկսվում է ներքին կամ արտաքին ազդակների ստացման դեպքում, ինչպես նաև Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցի նախաձեռնությամբ բոլոր այն դեպքերում, երբ.

**6.6.1** առկա է հնարավոր համընկնում Հանախորդի կամ գործարքի մյուս կողմի տվյալների և ահաբեկչության հետ կապված անձանց կամ Լիազոր մարմնի հանձնարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների միջև,

**6.6.2** դիտարկվող իրավիճակը ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2016թ. հոկտեմբերի 11-ի թիվ 1/711-Ա որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման բարձր ռիսկի և կասկածելիության չափանիշների վերաբերյալ» ուղեցույցով սահմանված դեպքերին, կասկածելի Գործարքի կամ Գործարար հարաբերության չափանիշներին կամ տիպաբանություններին,

**6.6.3** Գործարքի (Գործարար հարաբերության) պայմանները չեն համապատասխանում Հանախորդի գործարար բնութագրին, ձեռնարկատիրական գործունեության տվյալ բնագավառում սովորաբար կնքվող նման Գործարքների (Գործարար հարաբերությունների) պայմաններին կամ գործարար շրջանառության սովորույթներին,

**6.6.4** Ընկերության համար ակնհայտ է դառնում, որ առաջարկվող կամ կնքված գործարքների արժեքը չի գերազանցում սույն Կանոնակարգով նախատեսված հաշվետվության տրամադրման և Հանախորդի նույնականացման համար անհրաժեշտ սահմանաչափը միայն այն պատճառով, որ Հանախորդը ցանկանում է խուսափել Ընկերության կողմից այդ գործարքի վերաբերյալ հաշվետվության տրամադրումից կամ նույնականացումից,

**6.6.5** կնքված կամ առաջարկվող Գործարքի կամ Գործարար հարաբերության կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքները հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել ՓԼ/ԱՖ-ի նպատակով,

**6.6.6** Ընկերության համար պարզ է դառնում, որ առաջարկվող կամ կնքված Գործարքը (Գործարար հարաբերությունը) ակնհայտորեն տնտեսական կամ իրավաչափ նպատակ չի հետապնդում,

**6.6.7** Ֆիզիկական անձը, ով փոխկապակցված է որևէ իրավաբանական անձի հետ, իր անունից այլ իրավաբանական անձի փոխանցում (տրամադրում) է գումարներ (արժեթղթեր), որն ակնհայտորեն իրականացվում է այդ իրավաբանական անձանց միջև պայմանագրային պարտավորությունների կատարման նպատակով կամ այդ իրավաբանական անձանց միջև այլ կերպ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար,

**6.6.8** առկա են Գործարքի կամ Գործարար հարաբերության կասկածելիության մասին վկայող այլ հանգամանքներ:

**6.7** Ներքին ազդակներ են համարվում հաճախորդների հետ անմիջական կապ հաստատող աշխատակիցների, Ընկերության կառավարման մարմինների, Ներքին աուդիտի, ինչպես նաև ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցների կողմից ՆԴՄ-ին փոխանցված ազդակները (տեղեկատվությունը):

**6.8** Արտաքին ազդակներ են համարվում Լիազոր մարմնից, իրավասու մարմիններից, այլ հաշվետու անձանցից, օտարերկրյա գործընկերներից, ինչպես նաև տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներից ստացված ազդակները:

**6.9** Կանոնակարգի 6.6.1 ենթակետով սահմանված դեպքում, երբ առկա է հնարավոր համընկնում ահաբեկչության հետ կապված անձանց նույնականացման տվյալների հետ, Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցն անմիջապես իրականացնում է համապատասխան համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում Լիազոր մարմնին ներկայացնում է Կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն և կայացնում Հանախորդի միջոցների Սառեցման վերաբերյալ որոշում:

**6.10** Կանոնակարգի 6.6.1 ենթակետով սահմանված դեպքում, երբ առկա է հնարավոր համընկնում Լիազոր մարմնի հանձարարականներում նշված այլ անձանց նույնականացման տվյալների հետ, Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցը հանձնարարականում նշված ժամկետներում իրականացնում է համապատասխան համադրումներ և դրական համընկնման, ինչպես նաև այն դեպքում, երբ չի հաջողվում հավաստիանալ դրական համընկնման բացակայության հարցում, կատարում է հանձնարարականով սահմանված գործողությունները:

**6.11** ՆԴՄ-ն Կանոնակարգի 6.6 կետի 6.6.2-6.6.8 ենթակետերով սահմանված դեպքերում ողջամիտ ժամկետում կատարում է համակողմանի վերլուծություն օգտվելով Հանախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հավաքված և լրացուցիչ ձեռք բերվող տեղեկատվությունից, անհրաժեշտության դեպքում ճշտումներ է կատարում ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ և եթե Գործարքը կամ Գործարար հարաբերությունը որակում է որպես կասկածելի, Օրենքով սահմանված կարգով Լիազոր մարմնին ներկայացնում է կասկածելի Գործարքի կամ Գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն, ինչպես նաև ձեռնարկում է Օրենքով նախատեսված այլ միջոցառումներ:

**6.12** Ընկերության աշխատակիցը Կասկածելի Գործարքներից մեկը կամ մի քանիսը հայտնաբերելու կամ դրա մասին կասկած ունենալու դեպքում, Ընկերության Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցին ներկայացնում է տեղեկացում (էլեկտրոնային կամ թղթային եղանակով), որտեղ նշվում է Գործարքը (Գործարար հարաբերությունը) կասկածելի համարելու հիմքը, ինչպես նաև կցվում են բոլոր այն փաստաթղթերը, որոնք Ընկերության աշխատակցի կարծիքով անհրաժեշտ կլինեն համապատասխան ուսումնասիրություն իրականացնելու համար:

**6.13** Կանոնակարգի 6.12 ենթակետով նախատեսված տեղեկացումը աշխատակցի կողմից կազմվում է Հավելված 1-ին համապատասխան:

**6.14** Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցը Ընկերության աշխատակցից տեղեկացումը ստանալու նույն օրը իրականացնում է ներկայացված տեղեկատվության հավելյալ վերլուծություն և պատրաստում է եզրակացություն:

**6.15** ՆԴՄ-ն համադրում է հաճախորդի տվյալները World-Check տվյալների բազայի, մասնավորապես ՔԱԱ վերաբերյալ տվյալների բազայի (կամ Ընկերության կողմից այդ պահին կիրառվող տվյալների այլ բազայի), ինչպես նաև, համացանցի միջոցով հանրամատչելի այլ կայքերում առկա տեղեկատվության հետ՝ հավաստիանալով հայտարարությամբ նշված տեղեկատվության իսկության մեջ:

**6.16** ՆԴՄ-ն, համադրելով Հաճախորդների հետ անմիջական կապ հաստատող աշխատակցի կողմից տրամադրած և այլ աղբյուրներից ստացված, ինչպես նաև սեփական դիտարկումների արդյունքում հավաքագրած տեղեկատվությունը, կայացնում է վերջնական որոշում՝ Գործարքը կամ Գործարար հարաբերություն կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց դրամական միջոցները սառեցնելու վերաբերյալ:

**6.17** Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցը վերլուծություններ կատարելիս օգտվում է Հաճախորդի Պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հավաքված և լրացուցիչ ձեռք բերվող տեղեկատվությունից, անհրաժեշտության դեպքում ճշտումներ է կատարում Լիազոր մարմնի ֆինանսական դիտարկումների կենտրոնի հետ: Այն դեպքում, երբ կատարված վերլուծության արդյունքում Ներքին դիտարկումների աշխատակիցը պարզում է, որ առկա չեն սույն Կանոնակարգով և Օրենքով նախատեսված Կասկածելի Գործարքի (Գործարար հարաբերության) բոլոր չափանիշները կամ գործարքը (գործարար հարաբերությունը) կասկածելի համարելու հիմքերը անբավարար են, Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցը Ընկերության աշխատակցին տեղեկացնում է իր որոշման մասին: Տեղեկացումը կարող է ներկայացվել՝ Ընկերության աշխատակցի կողմից Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցին տրամադրված տեղեկացման ձևի վրա «Գործարքը թույլատրել» գրառում կատարելով կամ «Գործարքը թույլատրել» հաղորդագրությունն էլեկտրոնային փոստով Ընկերության աշխատակցին ուղարկելով՝ էլեկտրոնային նամակին կցելով Ընկերության աշխատակցի կողմից Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցին տրամադրված տեղեկացման ձևը:

**6.18** Այն դեպքում, երբ առկա Հաճախորդի միջոցների Սառեցման հիմքեր, Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցը Ընկերության աշխատակցին է ներկայացնում վերջինիս կողմից ներկայացված տեղեկացումը «Միջոցները սառեցնել» գրառումով: ՆԴՄ-ն Սառեցման մասին որոշումն ընդունելու պահից Գործարքը կամ Գործարար հարաբերությունը անմիջապես որակում է Կասկածելի և Կասկածելի Գործարքի կամ Գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն է տրամադրում Լիազոր մարմնին:

**6.19** Եթե ներքին և արտաքին ազդակների հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ կատարած վերլուծության արդյունքում ՆԴՄ-ն Գործարքը կամ Գործարար հարաբերությունը կասկածելի չի որակում, և կասկածելի Գործարքի կամ Գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն չի տրամադրում Լիազոր մարմնին, ապա Գործարքը կամ Գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու հիմնավորումները, Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցի կողմից կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները փաստաթղթավորվում (համաձայն Հավելված 4-ի) ու պահպանվում են 5 տարվա ընթացքում:

**ՊԼՈՒԽ 7. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՍ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՍ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԵՐԺՈՒՄԸ ԿԱՍ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՅ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ**

7.1 Ընկերությունը փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում իրավունք ունի մինչև 5 օրով, իսկ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված հանձնարարականի ստացման դեպքերում պարտավոր է 5 օրով կասեցնել Գործարքը կամ գործարար հարաբերությունը և այդ մասին անմիջապես կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրել Լիազոր մարմնին:

7.2 Գործարքը կամ Գործարար հարաբերությունը կասեցնելու մասին Լիազոր մարմնի որոշումը ենթակա է կատարման անմիջապես՝ այն Ընկերության կողմից ստանալու պահից:

7.3 Ընկերության կամ Լիազոր մարմնի՝ Գործարքը կամ Գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշումը, մինչև կասեցման ժամկետի ավարտը կարող է ուժ կորցրած ճանաչել միայն Լիազոր մարմինը՝ իր նախաձեռնությամբ կամ Ընկերության միջնորդությամբ, եթե պարզվի, որ ՓԼ/ԱՖ կասկածը հիմնավոր չէ:

7.4 Այն դեպքում, երբ հնարավոր չէ իրականացնել Հանախորդի պատշաճ ուսումնասիրությունը, կամ առկա է Լիազոր մարմնի կողմից Գործարքի կամ Գործարար հարաբերության իրականացման մերժման հանձնարարական, Ընկերությունը պետք է մերժի Գործարքի կամ Գործարար հարաբերության իրականացումը և դիտարկի այն կասկածելի որակելու հարցը:

7.5 Այն դեպքում, երբ Կանոնակարգի 5.6 կետի հիման վրա Գործարար հարաբերություն հաստատելուց հետո սահմանված ժամկետում հնարավոր չէ իրականացնել Հանախորդի պատշաճ ուսումնասիրությունը կամ առկա է Լիազոր մարմնի կողմից Գործարքի կամ Գործարար հարաբերության դադարեցման հանձնարարական ապա Ընկերությունը պետք է դադարեցնի Գործարքը կամ Գործարար հարաբերությունը և դիտարկի այն կասկածելի որակելու հարցը:

7.6 Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում, ինչպես նաև Լիազոր մարմնի կողմից հրապարակված ցանկերում ներառված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող միջոցները անմիջապես և առանց նշված անձանց նախապես տեղեկացնելու ենթակա է սառեցման Ընկերության կողմից:

7.7 Սառեցումը վերացվում է միայն Լիազոր մարմնի կողմից՝ միջոցները սխալմամբ սառեցվելու, քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից դրանց վրա կալանք դնելու, ինչպես նաև այն դեպքում, երբ բացահայտվում է, որ այն անձը, որի միջոցները սառեցվել են, հանվել է ահաբեկչության հետ կապված անձանց ցանկից:

7.8 Ընկերությունը ահաբեկչության հետ կապված անձանց միջոցները սառեցնելու դեպքում Գործարքը կամ Գործարար հարաբերությունը անմիջապես որակում է որպես կասկածելի և Լիազոր մարմնին է տրամադրում կասկածելի Գործարքի կամ Գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

7.9 Սառեցման առարկա չի կարող լինել այն գույքը, որը պատկանում է բարեխիղճ երրորդ անձին, այսինքն՝ այն անձին, որը գույքը այլ անձի տրամադրելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ այն օգտագործվելու է կամ նախատեսվում է օգտագործվել հանցավոր, ներառյալ ահաբեկչության կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակներով, ինչպես նաև այն անձին, որը գույքը ձեռք բերելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ դա ստացվել է հանցավոր ճանապարհով:

## **ՊԼՈՒԽ 8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՍՍԱԹՂԹԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ՀԱՇՎԱԹՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

8.1 Ընկերությունը Հանախորդի (Լիազորված անձի) հետ Գործարար հարաբերություն հաստատելիս նրանից պահանջում է սույն Կանոնակարգով սահմանված, նրան նույնականացնելու և պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը, որոնք ենթակա են հաշվառման և պահպանման:

8.2 Հաշվառումը կատարվում է այնպես, որ անհրաժեշտության դեպքում հնարավորություն լինի վերականգնել Հանախորդի պատշաճ ուսումնասիրությունը կամ պահպանման ենթակա

տեղեկությունների և փաստաթղթերի ձեռքբերմանն ուղղված այլ գործողություններն իրականացրած աշխատակցի տվյալները:

**8.3** Հանախորդի հետ անմիջական կապ հաստատող աշխատակիցները և ՆԴՄ-ն ապահովում են պահպանվող տեղեկությունների և փաստաթղթերի անվտանգությունը և գաղտնիությունը:

**8.4** Տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը) հաշվառվում և պահպանվում են թղթային և/կամ էլեկտրոնային եղանակով՝ Գործարար հարաբերության ավարտից կամ Գործարարի կատարումից հետո՝ առնվազն 5 տարվա ընթացքում, իսկ արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ ավելի երկար ժամկետով:

**8.5** Պահպանման և հաշվառման ենթակա տեղեկություններն են՝

**8.5.1** Հանախորդի հետ կնքված պայմանագիրը,

**8.5.2** Հանախորդի կողմից տրված տեղեկատվությունը (փաստաթղթերը),

**8.5.3** Հանախորդի և Ընկերության միջև էլեկտրոնային հաղորդակցությունը (առկայության դեպքում),

**8.5.4** Հանախորդի վերաբերյալ Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակիցների կողմից հավաքագրված և նախորդ կետերով չնախատեսված տեղեկատվությունը:

## **ՊԼՈՒԽ 9. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ**

**9.1.** Ընկերությունը կազմակերպում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման թեմայով պարբերաբար ուսուցում Գործադիր տնօրենի, Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցի, Ընկերության աշխատակիցների և Ներքին աուդիտի գործառույթներ իրականացնող անձի համար:

**9.2.** ՓԼ/ԱՖ դեմ պայքարի դասընթացներն անցկացվում են Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցի կողմից առնվազն տարին երկու անգամ՝ Կանոնակարգի 3.7 ենթակետով նախատեսված հաշվետվության ներկայացման պահից 20 /քսան/ աշխատանքային օրվա ընթացքում: Դասընթացների անցկացման ժամանակացույցը հաստատվում է Ընկերության Գործադիր տնօրենի կողմից՝ հաշվի առնելով Ընկերության աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և աշխատանքային գրաֆիկը: ՓԼ/ԱՖ դեմ պայքարի դասընթացները նոր աշխատակիցների համար կազմակերպվում են աշխատանքի ընդունվելուց հետո երեք ամսվա ընթացքում:

**9.3.** Դասընթացների անցկացման ժամանակացույցը ներառվում է Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցի կողմից ներկայացվող հաշվետվության մեջ:

**9.4.** Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակցի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի դասընթացներն արձանագրվում են:

**9.5.** Իրականացված ուսուցման նյութերը, դրան մասնակցած աշխատակիցների տվյալները և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը հաշվառվում են (Հավելված 6) և պահպանվում առնվազն 5 տարի ժամկետով:

## **ՊԼՈՒԽ 10. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏԱՄԱՐ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

**10.1.** Կանոնակարգի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է ՆԴՄ-ի կողմից:

**10.2.** Ներքին աուդիտորն Օրենքով սահմանված կարգով տարեկան առնվազն մեկ անգամ ստուգումներ է իրականացնում՝ հավաստիանալու, որ Գործադիր տնօրենն ու Ներքին դիտարկումների մարմինն ապահովում են Ընկերության գործունեության լիարժեք համապատասխանությունն Օրենքի, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերի և այլ ներքին իրավական ակտերի պահանջներին:



**10.3.** Ներքին աուդիտորը Գործադիր տնօրենին և Ժողովին հաշվետվություններ է ներկայացնում ստուգումների արդյունքում ձևավորված իր գնահատականների և բացահայտումների վերաբերյալ, ներառյալ՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման հարցերով աշխատակիցների ուսուցման ու վերապատրաստման համարժեքության և արդյունավետության վերաբերյալ իր եզրակացությունը:

**10.4.** Ներքին աուդիտորը ընթացիկ կամ պլանային ստուգման ընթացքում Կասկածելի գործարքների կամ փողերի լվացման հավանական սխեմաների, Օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի (ներքին ու արտաքին) պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում մինչև ստուգման արդյունքների վերաբերյալ փաստաթուղթը համապատասխան իրավասու մարմնին ներկայացնելն այդ մասին պետք է տեղեկացնի Ներքին դիտարկումների մարմնին՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի անհրաժեշտ միջոցառումներն իրականացնելու նպատակով:

**10.5.** Կանոնակարգով սահմանված պարտականությունների և լիազորությունների չիրականացման կամ ոչ պատշաճ իրականացման, սահմանված գործառնությունները/քայլերը կազմակերպելու և ապահովելու, պահանջվող տեղեկությունները հավաքագրելու և պահպանելու համար պատասխանատվություն են կրում Հանախորդի հետ անմիջական կապ ապահովող համապատասխան աշխատակիցները և ՆԴՄ-ն:

**10.6.** Կանոնակարգով սահմանված պատասխանատվություն են կրում ՆԴՄ-ի պատասխանատու աշխատակիցները:

**10.7.** Ընկերությունում ՓԼ/ԱՖ կանխարգելման գործառնությունների համակարգման և դրանց պատշաճ իրականացման նկատմամբ ընթացիկ հսկողության պատասխանատու է հանդիսանում ՆԴՄ-ն: Կանոնակարգով սահմանված պահանջների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ներքին աուդիտը:

## **ՊԼՈՒԽ 11. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**11.1** Սույն Կանոնակարգի բոլոր լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են Ընկերության Գործադիր տնօրենի կողմից (եթե Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ) և ուժի մեջ են մտնում Գործադիր տնօրենի կողմից հաստատման պահից:

<b>apricot.</b>	Կանոնակարգ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի	«ԷՓԲԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ «10» հունվարի 2024թ. ՀԱՎԵԼՎԱԾ 1
-----------------	---	---

**ՏԵՂԵԿԱՑՈՒՄ**

N	Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը), անհատականացնող վյալները	Գործարքի էությունը	Գործարքը կասկածելի համարելու հիմքերը	Ընկերության աշխատակցի անունը, ազգանունը	Գործարքի կատարման համար նախատեսված ժամկետները	Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը

Տեղեկացում տրամադրելու օրը, ժամը	
----------------------------------	--

Ներքին դիտարկումների ստորաբաժանման աշխատակցի որոշումը	
Որոշման կայացման օրը, ժամը	

<b>apricot.</b>	Կանոնակարգ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի	«ԷՓԲԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ «10» հունվարի 2024թ. ՀԱՎԵԼՎԱԾ 2
-----------------	---	---

**Հաճախորդի հետ անմիջական կապ հաստատող աշխատակիցների կողմից մերժված գործարքների վերաբերյալ հաշվետվություն**

N	Գործարքի նկարագրությունը	Գործարքի կատարման ամսաթիվը	Գործարքի գումարը	Գործարքի մասնակից կողմերին վերաբերող նույնականացման տվյալներ		Գործարքը մերժելու հիմքերը
				Հաճախորդ	Շահառու	

<b>apricot.</b>	Կանոնակարգ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի	«ԷՓԲԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ «10» հունվարի 2024թ. ՀԱՎԵԼՎԱԾ 3
-----------------	---	---

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

20\_թ.-ի \_-րդ կիսամյակի ընթացքում Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), նշված օրենքի հիման վրա ընդունված իրավական ակտերի և ԷՓԲԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ ՓԲԸ-ի ներքին իրավական ակտերի պահանջների կատարման վերաբերյալ

**Պարտադիր տեղեկացման գործարքների հաշվետվություն**

Ամիսներ	Պարտադիր տեղեկացման գործարքների քանակ
Ընդամենը	

**Կասկածելի գործարքների նկարագրություն**

N	Գործարքի նկարագրությունը	Գործարքի կատարման ամսաթիվը	Գործարքի գումարը	Գործարքի մասնակից կողմերին վերաբերող նույնականացման տվյալներ		Գործարքը կասկածելի համարելու հիմքերը	Գործարքին վերաբերող հետագա քայլերը
				Հաճախորդ	Շահառու		

**Մոնիտորինգի ենթարկված գործարքների նկարագրություն**

<b>apricot.</b>	Կանոնակարգ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի	«ԷՓԲԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ «10» հունվարի 2024թ. ՀԱՎԵԼՎԱԾ 3
-----------------	---	---

N	Գործարքի նկարագրությունը	Գործարքի մասնակից կողմերին վերաբերող նույնականացման տվյալներ		Մոնիտորինգի իրականացման նպատակը	Մոնիտորինգի արդյունքը
		Հաճախորդ	Շահառու		

**Կասեցված կամ մերժված գործարքների նկարագրություն**

N	Գործարքի նկարագրությունը	Գործարքի կատարման ամսաթիվը	Գործարքի գումարը	Գործարքի մասնակից կողմերին վերաբերող նույնականացման տվյալներ		Գործարքը կասեցնելու կամ մերժելու հիմքերը	Գործարքին վերաբերող հետագա քայլերը
				Հաճախորդ	Շահառու		

**Սառեցված գործարքների նկարագրություն**

N	Գործարքի նկարագրությունը	Գործարքի կատարման ամսաթիվը	Գործարքի գումարը	Գործարքի մասնակից կողմերին վերաբերող նույնականացման տվյալներ		Գործարքը սառեցնելու հիմքերը	Գործարքին վերաբերող հետագա քայլերը
				Հաճախորդ	Շահառու		

Հաշվետու ժամանակաշրջանում նախատեսված հանձնարարականներ և միջոցառումներ

<b>apricot.</b>	Կանոնակարգ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի	«ԷՓԲԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ «10» հունվարի 2024թ. ՀԱՎԵԼՎԱԾ 3
-----------------	---	---

Հանձնարարականի կամ միջոցառման նկարագրությունը	Կատարման վերաբերյալ մանրամասներ

Ընկերության կողմից իրականացված գործարքների, աշխատակիցների գործողությունների համապատասխանությունը Օրենքի և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջներին

Նկարագրություն	Եզրակացություն և/կամ կանխարգելիչ միջոցառման նկարագրություն

Ընկերության կողմից իրականացվող ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում նախատեսվող սեմինար-դասընթացի տվյալներ

Թեմա	Նկարագրություն, անցկացման ժամկետներ և մասնակիցներ

Ներքին դիտարկումների մարմնի պատասխանատու աշխատակից՝

անուն, ազգանուն

\_\_\_/\_\_\_/20\_\_թ.

<b>apricot.</b>	Կանոնակարգ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի	«ԷՓԲՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ «10» հունվարի 2024թ. ՀԱՎԵԼՎԱԾ 4
-----------------	---	--

\_\_\_/\_\_\_/20\_\_թ.

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N\_**

**Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով  
իրականացված վերլուծության արդյունքների ամփոփման**

Գործարքի և/կամ գործարքների նկարագիրը	
Իրականացված վերլուծության նկարագիրը	
Իրականացման վերլուծության համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը	
Քննարկմանը մասնակցած իրավասու անձանց դիրքորոշումները	
Եզրահանգումներ (այդ թվում՝ Լիազոր մարմին կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվության չներկայացման հիմնավորումներ)	


**Քննարկմանը մասնակցած իրավասու անձանց տվյալները՝**

Անուն, ազգանուն, պաշտոն	ստորագրություն
Անուն, ազգանուն, պաշտոն	ստորագրություն
Անուն, ազգանուն, պաշտոն	ստորագրություն

apricot.

Կանոնակարգ  
Փողերի լվացման և ահաբեկչության  
ֆինանսավորման դեմ պայքարի

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ  
«10» հունվարի 2024թ.  
ՀԱՎԵԼՎԱԾ 5





<b>apricot.</b>	Կանոնակարգ Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի	«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ «10» հունվարի 2024թ. ՀԱՎԵԼՎԱԾ 6
-----------------	---	---

**Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն**

ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում  \_\_\_\_\_  թեմայով անցկացված սեմինար-դասընթացի մասնակիցների

\_\_/\_\_/20\_\_թ.

Պաշտոն	Անուն, ազգանուն	Ստորագրություն

Սեմինար-դասընթացն

անցկացնող անձի տվյալներ (պաշտոն, անուն, ազգանուն)

ստորագրություն